



Փորձագետի կարծիք

Կինը՝ գյուղական համայնքի ղեկավար. ինչպիսի՞ն է նա

Տեղական մակարդակում առաջնորդության համար ամենահամապատասխան թեկնածուներն են 40-ից ոչ երիտասարդ, բարձրագույն կրթությամբ և համայնքում հարգանք վայելող կանայք: Երբեմն այսպիսի կնոջը պետք է միայն իր թեկնածությունը առաջադրելու մասին խորհուրդ, իսկ հետագայում՝ հաջող ընտրարշավ անցկացնելու համար խորհրդատվություն:

Տղամարդուն ընտրվելու համար բավական է լինել 30-ն անց, իսկ համայնքի կին ղեկավարների համար միջին տարիքը 45-ն է: Կնոջից ակնկալում են ավելի հարուստ սոցիալական կապիտալ, քանի որ 30 կամ նույնիսկ 40 տարեկան կնոջը համայնքում կարող են ոչ պատշաճ կերպով ընկալել, համարել չափից ավելի երիտասարդ ու անփորձ և ընդհանուր առմամբ աշխատանքի համար ոչ պիտանի:

Համայնքի ղեկավար կինը, անշուշտ, ավելի կրթված է, նա կարող է լինել բարձրագույն կրթությամբ միակ կինը, թեք գյուղը շատ փոքր է: Կրթությունը նա, որպես կանոն, ստացել է երևանում, գյուղատնտեսական համալսարանում, որից հետո վերադարձել է հարազատ գյուղ կամ մոտակա քաղաք:

Հաճախ նա ամուսնացած է և ունի 2-3 երեխա, սակայն հանդիպել են թե՛ առանց ամուսնու և երեխաների, թե՛ 8 երեխայի մայր կանայք: Բայց քանի որ նրա միջին տարիքը 55-ն է, նա համեմատաբար ավելի շատ ազատ ժամանակ ունի, քանի որ, տարիքից ելնելով, նրա երեխաներն արդեն ամուսնացած են կամ հեռացել են գյուղից:

Համայնքի ղեկավարը կախված է մարզի վարչակազմից, իսկ կանայք չունեն մարզպետի և նրա աշխատակազմի հետ լավ հարաբերություններ պահպանելու համար այդքան անհրաժեշտ խնջույքի հմտություններ: Միևնույն ժամանակ կնոջը հաճախ հաջողվում է լավ հարաբերություններ հաստատել միջազգային կազմակերպությունների հետ և նրանցից ֆինանսավորում ստանալ:

Կանանց համար իրենց թեկնածությունն առաջադրելու դրդապատճառ կարող է լինել ոչ միայն աշխատանքի տեղավորվելը, այլ նաև համայնքում համայնքի ղեկավար կանանց մեծ մասը պատմում էր, որ իրենց ընտանիքները դեռ չէին, որ իրենց ընտրվեն համայնքի ղեկավար, հաճախ ընտրվելուն օգնում էր ամուսինը կամ տղան: Որոշ ղեկավարներ մուսուլմանական արարելու և իշխանություն ստանալու միջոց է:

Ընտանիքը ընտրություններում կարող է լինել ինչպես արժեքավոր օգնական, այնպես էլ խոչընդոտ: Համայնքի ղեկավար կանանց մեծ մասը պատմում էր, որ իրենց ընտանիքները դեռ չէին, որ իրենց ընտրվեն համայնքի ղեկավար, հաճախ ընտրվելուն օգնում էր ամուսինը կամ տղան: Որոշ ղեկավարներ մուսուլմանական արարելու և իշխանություն ստանալու միջոց է:

Համայնքների ղեկավարի կանանց մեծ մասն իրենց համայնքներում մեծ հեղինակություն է վայելում և հիմնականում վերընտրվում է առանց դժվարությունների: Նրանցից ոմանք այս պաշտոնը զբաղեցնում են դրա հիմնադրման պահից:

Համայնքի ղեկավարի պաշտոնում ընտրվելու գործում որոշ ղեկավարներ առանցքային դեր է խաղացել ընտրարշավի կազմակերպմանը ցուցաբերած աջակցությունը: Կանայք այդպիսի օգնության համար իրենք են դիմել, կանանց տեղական ԶԿ-ներ: Սակայն եթե ԶԿ-ները, ընդհանրապես, չսպասեն կանանց նախաձեռնությանը, այլ իրենք գտնեն առաջնորդի ներուժով կանանց և նրանց ընտրարշավի կազմակերպման գործում օգնություն և խորհուրդ առաջարկեն, դա ավելի արդյունավետ կլինի:

Կանայք հաղթում են միայն արդար ընտրություններում: Համապատասխանաբար, այն համայնքներում, որտեղ թեկնածուների թվում կին կա, ընտրարշավի ընթացքի և քվեարկության նկատմամբ հավելյալ հսկողությունը կնպաստի կին թեկնածուի հաղթանակին, իհարկե այն դեպքում, երբ նա մրցակցության իրական, ոչ թե կեղծ մասնակից է:

Կովկասի ինստիտուտ, 2011-ին ՄԱԿ-ի Ջնոպիցիայի ծրագրի (UNDP) և «Հայրիկի Բյուլ» հիմնադրամի աջակցությամբ անցկացված «Կանայք Հայաստանի տեղական ինքնակառավարման մեջ» հետազոտության արդյունքներից

Կանայք եւ ՏԻՄ-երը. օրինաչափությունների ճիրաններում

Սկիզբը՝ էջ 1

Ջուզադիպություն, թե՞ օրինաչափություն

Այն, որ Հայաստանում կանանց վստահում են ղեկավարել միայն գյուղական համայնքները, վաղուց հայտնի ճշմարտություն է: Իսկ օրինաչափությունն այս դեպքում այն է, որ 2011-ի դրությամբ կանանց կողմից ղեկավարվող 24 գյուղական համայնքներից յուրաքանչյուրն ուներ 2500-ից ոչ ավել բնակչություն: Բացի այդ, ըստ փորձագիտական գնահատականների, տեղական ինքնակառավարման մեջ կանանց ակտիվությունը ուղիղ համեմատական է համայնքի հեռավորությանը մայրաքաղաքից և հակառակ համեմատական սահմանին մոտ լինելուն:

Այս օրինաչափությունը բացատրող փորձերը միշտ չէ, որ համոզիչ են թվում, քանի որ բացի աշխարհագրական դիրքից և լեռնային շրջաններում նկատվող կանանց ավանդական ակտիվությունից՝ հովտային համայնքների համեմատ, ի հայտ են գալիս բազմաթիվ այլ գործոններ, որոնցով կարող է պայմանավորված լինել տվյալ համայնքում կին ղեկավարի առաջադրվելը: Նշանակություն ունի տնտեսավարման տեսակը, արտազան աշխատանքի մեկնող տղամարդկանց թիվը,

համայնքի պատմական ու թքնիկ արձանները, փախստականների առկայությունը, գյուղի աղքատության մակարդակը...

Շատ դեպքերում ստացվում է, որ կանանց լավ կյանքից չէ, որ ղեկավար են ընտրում... Բայց դրա հետ մեկտեղ կա և մեկ օրինաչափություն. գրեթե բոլոր այդ կանայք մի քանի անգամ վերընտրվում են, ինչը վկայում է, որ նրանք արդարացնում են իրենց համագյուղացիների ակնկալիքները՝ արժանանալով նրանց վստահությանը երկրորդ, երրորդ, չորրորդ անգամ... Ի դեպ, այս տարի հաղթանակ տարած բոլոր կին գյուղապետները արդեն իսկ գործող համայնքապետներ էին: Ընդհանուր առմամբ ՏԻՄ համակարգը դժվարությամբ է ընդունում նորեկներին, և այս օրինաչափությունը գործում է անկախ սեռից. տղամարդ գյուղապետները ավելի քան 80 տոկոսով վերընտրվել են:

Մի փոքր առաջընթաց գյուղական համայնքների հաշվին

Նախորդ ընտրությունների արդյունքներով՝ ավագանիների կազմում ընդգրկված է եղել մոտ 7 տոկոս կին, և այս տարվա սեպտեմբերին կայացած ընտրությունների արդյունքներով արձանագրված 8,3%-ը, կարե-

լի է ասել, մի փոքր առաջընթաց է:

ԿԸՀ նախագահ Տիգրան Մուկուչյանի խոսքով՝ կանայք այս անգամ շատ ավելի ակտիվ էին ավագանու ընտրություններում, առաջադրումները մի քանի անգամ շատ էին, քան նախորդ ընտրություններում: Նշենք, որ նույնիսկ այս դիտարկման պարագայում ընտրված կանանց թիվը ավագանիների կազմում բարձրագույն ընդամենը 1,3 տոկոսով, այն էլ՝ հիմնականում գյուղական համայնքների հաշվին, քանի որ քաղաքներում կին ավագանիների թիվը միշտ էլ շատ ավելի ցածր է եղել, ինչը նույնպես օրինաչափություն է:

Ի տարբերություն աղքատ և փոքր գյուղական համայնքների, որտեղ տղամարդիկ հեշտությամբ զիջում են իրենց դիրքերը կանանց, քաղաքային իշխանության համար կենցաղ մահու կռիվ է ծավալվում, և այդ կռիվ մեջ կանայք հաճախ չեն էլ մտնում, համարձակողներն էլ, այդ թվում շատ արժանի կանայք, հիմնականում պարտվում են: Դրա համար էլ ոչ միայն երեք կին քաղաքապետ չենք ունեցել, այլև քաղաքային ավագանիներն էլ տղամարդկանց ակունքներ են հիշեցնում: Իսկ հարցը՝ «Ինչո՞ւ անգրագետ տղամարդը կարող է ավագանու անդամ լինել, իսկ գրագետ կինը՝ ոչ» շարունակում է սպասել իր պատասխանին: Թամարա Դովնաթանյան

ՏԻՄ մրցավազը

Մյունիքն առաջադար է...



Այս տարվա սեպտեմբերին կայացած ընտրությունների արդյունքներով՝ կանանց թիվը ավագանիների կազմում Մյունիքում ամենամեծն է՝ 17,4 տոկոս, այն դեպքում, երբ ողջ հանրապետության կարվազում կանայք ավագանիներում ընդամենը 8,3 տոկոս են կազմում: Ավագանիներում կանանց ներկայացվածության բարձր ցուցանիշ են արձանագրել նաև Լճոն (12,5% և Տավուշը (9,2%): Ամենացածր թիվ կանայք ընդգրկված են Գեղարքունիքի (2%), Արագածոտնի (4,1%) և Վայոց ձորի (4,6%) ավագանիներում:

Մյունիքի մարզում սեպտեմբերին կայացած ՏԻՄ ընտրություններին համեմատաբար մեծ թվով կանայք են մասնակցել: ԿԸՀ տվյալներով՝ մարզում համայնքի ղեկավարի թեկնածություն է առաջադրել 13 կին (9%), իսկ ավագանու անդամության կին թեկնածուների թիվը 120-ն էր (17,3%): Նշենք, որ հանրապետությունում համայնքի ղեկավարի պաշտոնին հավակնող կանանց թիվը 3,5 տոկոսից չի անցել, իսկ ավագանու անդամության թեկնածու կանայք 9 տոկոս են կազմել:

Համայնքի ղեկավար առաջադրված 13 կանանցից ընտրությունները հաջողությամբ ավարտվեցին միայն 3-ի համար, իսկ ավագանու անդամ առաջադրված 120 թեկնածուներից ընտրվել են 86-ը:

Այսպիսով Մյունիքն առաջատար է ավագանիների կազմում կանանց ներկայացվածության առումով: Ընդ որում՝ նախորդ ընտրությունների արդյունքներով Մյունիքի յոթ քաղաքների ավագանիներից ոչ մեկում կին չի եղել, իսկ այս տարի վեցն են ընտրվել՝ մեկական կին մարզի քաղաքներից յուրաքանչյուրում, բացի Կապանից, որտեղ մրցակցությունը շատ բարձր էր՝ գրեթե չորս թեկնածու մեկ տեղի համար:

Կին թեկնածուների հաջողության գործակիցը բարձր է եղել

Գորիսի և Սիսիանի տարածաշրջանները ընդգրկող թիվ 37 ընտրատարածքում համայնքի ղեկավարի 7 կին թեկնածուներից 2-ը վերընտրվել են: Ավագանու անդամության 42 կին թեկնածուներից ընտրվել են 33-ը : Հաջողության մույնքան բարձր ցուցանիշ արձանագրվել է Կապանի ու Մեղրու կից համայնքները ընդգրկող թիվ 38 ընտրատարածքում:

Կին թեկնածուների քաղաքական ակտիվությունն այստեղ պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ տարածաշրջանում գործող ԶԿ-ներն աջակցել են կա-

նանց՝ տարբեր նախաձեռնություններ իրականացնելով: Մասնավորապես՝ Գորիսի կանանց զարգացման «Ռեսուրս կենտրոն» հիմնադրամը «Կանանց քաղաքական հզորացման աջակցություն» տեղական մակարդակում ծրագրի շրջանակներում, Մյունիքի մարզի կանանց ռեսուրս կենտրոնների ցանցի հետ համատեղ աջակցել են մի շարք համայնքներում առաջադրված կին թեկնածուներին: Ծրագիրն իրականացվել է ԵԱԶԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ:

Առաջադրված կանանց մասին պատրաստվել են տեսանյութեր, քաղաքական

գովազդներ, որոնք հեռարձակվել են տեղական և մարզային հեռուստաընկերություններով, այդ նույն նյութերը տեղադրվել են նաև Womennet.am կայքում: Հատկանշական է, որ տեղեկատվական այդ աջակցությունը ստացած բոլոր կին-թեկնածուները ընտրվել են: Թերևս այս փաստն ամուղակիորեն պայացուցում է, որ կանայք ՏԻՄ ընտրություններում գերխոչընդոտները հաղթահարելու խնդիր ունեն և լրացուցիչ աջակցություն ստանալու դեպքում, լինի բարոյական թե տեղեկատվական, հասնում են հաջողության:

Իրինա Յոլյան, Գորիս

No comment

Տեղական ընտրություններ. թեկնածուների շքերթը Հայաստանում եւ Բելգիայում



Բելգիա, 2012թ.



Հայաստան, 2012թ.

Կանայք համայնքի ղեկին

Այս տարի վերընթրվել է 10 կին գյուղապետ

ԿԸԳ տվյալներով՝ սեպտեմբերին կայացած ընտրություններում հաջողության են հասել...

լեռնահամայնքային (Յաղոն), Արուսյակ Գուհարյան (Պարզեպետ), Շիրակում՝ Արուսյակ Գուհարյան (Արեգուն), Սյունիքում՝ Շուշան Մարգարյանը (Հացավան), Արմինե Մանուկյանը (Շրվենաց), Լուսինե Ավետիսյանը (Քարահունջ), Կոտայքում՝ Ալինա Զարությունյանը (Նոր Երզնկա)։

Մեր հարցազրույցները գյուղապետ կանանց հետ կարող եք նաև ամբողջությամբ կարդալ WomenNet.am կայքում:

Սուսաննա Գեորգյան. «Իմ գլխավոր նպատակն այսօր գյուղում մանկապարտեզ կառուցելն է»



Արմավիրի մարզի Արևաշատ գյուղի քան տարվա ղեկավար Սուսաննա Գեորգյանը, իր իսկ խոսքով, ուզում էր իրավաբան դառնալ, բայց չստացվեց: Ամուսնանալուց հետո ընտ-

րեք բանասիրական ֆակուլտետն ու ավելի ուշ հարազատ գյուղի միջնակարգ դպրոցում հայոց լեզու էր դասավանդում: «Երեխաներին էի կրթում: Մի օր էի իմ աշխատանքն ու կարծում էի, որ իմ առաքելությունը մանկավարժությունն է՝ երիտասարդ սերունդին կրթելը, սակայն ինձ այլ ճակատագիր էր սպասում...»

90-ականներին, ինչպես ամբողջ հանրապետությունում, Արևաշատում էլ վիճակը սարսափելի էր. լույս ու ջուր չկար, գազը՝ շքեղություն էր, խորքային հորերը ցամաքել էին՝ ոռոգում չկար:

«Գյուղացին հուսահատված էր, հիասթափված ու նեղված: Զգիտես ինչն է, բայց գյուղացիները որոշեցին, որ հենց ես եմ այն մարդը, որ դուրս կբերի գյուղն այդ վիճակից: Մի խոսքով արևաշատցիներ եկան մեր տուն ու առաջարկեցին, որ դառնան համայնքի ղեկավար: Նախ խոսեցին ամուսնուս հետ, ասացին, որ ես կազմակերպչական օրդ ունեմ, աշխատասեր եմ ու նվիրված»,- հիշում է Սուսաննա Գեորգյանը՝ հավելելով, որ ամուսինը սկզբում համաձայն չէր, սակայն գյուղացիները նրան էլ կարողացան համոզել:

Ընտրվեց միաձայն և այդ օրվանից արդեն երկու տասնյակ տարի Արևաշատ համայնքի ղեկավարն է:

Նա այն գյուղապետներից չէ, ովքեր ձեռքով խփում են սեղանին, որպեսզի ենթակամներն իրենից վախենան:

«Մարդ կա՝ մտածում է, որ պետք է կոպիտ լինես, որ վախենան: Դա լուծում չէ: Ես իմ գյուղում եմ ծնվել, մեծացել, բնակիչների կեսն իմ աշակերտներն են: Ընտրվելուց հետո մինչև 2000 թ. համատեղությամբ դպրոցում էլ եմ աշխատել, որովհետև գյուղում հայոց լեզվի ուսուցիչ չկար: Տեղյակ եմ գյուղացիների խնդիրներին, ընտանեկան պրոբլեմներին և վարուց հասկացել եմ մի բան՝ յուրաքանչյուրի նկատմամբ պետք է անհատական մոտեցում ցուցաբերել»,- ասում է տիկին Սուսաննան՝ շեշտելով, որ միայն դրանով իհարկե դժվար կլիներ շահել ժողովրդի վստահությունն ու հարգանքը. եթե գյուղապետը չաշխատի, չիմանա իր գյուղի խնդիրների մասին և դրանք լուծելու ուղիներ չառաջարկի, հարգանք ու սեր չի վաստակի: Իսկ որ տիկին Սուսաննան վայելում է արևաշատցիների սերը, համոզվել է բազմիցս. վերջին անգամ՝ այս տարվա սեպտեմբերի 9-ին:

«Այս ընտրություններում որոշել էի թեկնածություն չառաջադրել, մտածում էի՝ հերթն է, հիմա էլ հերթ տամ առավել երիտասարդին, ինքս ինձ հանգիստ պարգևեմ: Գյուղացիները թույլ չտվեցին, որ ես չառաջադրվեմ: Հավատացե՛ք, դա ամենամեծ գնահատականն էր»,- ասում է տիկին Սուսաննան:

Համագյուղացիների այդ վստահությանն արժանացել է տքմաջան աշխատանքի շնորհիվ: Լուծվել են հարցեր, որոնք ոչ հեռու անցյալում անլուծելի էին թվում. խորքային հորերը, որ ցամաքած էին, վերանորոգվեցին, գյուղը զազիֆիկացվեց, մասնակի ասֆալտապատվեց, ջրագիծ անցկացվեց, դպրոցի շենքը հիմնանորոգվեց...

Իր կատարած աշխատանքից դժգոհ չէ, սակայն գերազանց գնահատական էլ, ասում է, դեռ արժանի չէ: «Իմ գլխավոր նպատակը գյուղում մանկապարտեզ կառուցելն է: Կանանց մեծ մասը հողագործությամբ է զբաղվում, և երեխաներին պահելու, ինչ-որ մեկի մոտ թողնելու հարց է առաջանում: Այ երբ մանկապարտեզի հարցը լուծվի, ու նորից հանդիպեմք, որ հարցնե՛ք՝ գո՞հ եմ իմ կատարած աշխատանքից, հանգիստ ու հպարտությամբ կասե՛մ՝ գոհ եմ»:

Ալինա Զարությունյան. «Ծիծառ չէ, երբ մարդ հոգով է կառավարում, բայց ես այլ կերպ չեմ կարող»

«Պայքարող եմ, բայց ընթրստ չեմ: Ներողամիտ եմ, ինձ կարող են ամենավատ բանն անել, բայց ես կարող եմ նրանց հանգիստ բարեկեցի ու հոգսերից հարցնել: Երևի դա իմ առավելությունն է: Եթե որոշեցի ինչ-որ բան անել, անպայման պետք է հասնեմ իմ նպատակին: Բայց միշտ ռեալ եմ գնահատում իրավիճակն ու իմ առջև այնպիսի խնդիրներ դնում, որոնց լուծումն անհնարին չէ»,- այսպես է ինքն իրեն բնութագրում վեցերորդ անգամ անընդմեջ Նոր Երզնկա գյուղում համայնքի ղեկավար ընտրված Ալինա Զարությունյանը:

րյալ է: Անկախ նրանից՝ տանն ես, գյուղապետարանում, փողոցում, թե արձարանում, դու պետք է առաջին հերթին մարդ լինես: Գուցե ճիշտ չէ, երբ մարդ հոգով է կառավարում, բայց ես հոգով եմ կառավարում: Ես գիտեմ իմ սխալը, բայց դրա դեմ ոչինչ չեմ կարող անել...»

Նրա քաղաքական կյանքն սկսվեց 1996-ին, երբ առաջին անգամ ընտրվեց Նոր Երզնկայի գյուղապետ: Մինչ այդ երկար տարիներ աշխատել է Նաիրիի շրջափոխի գործկոմում: «Մասնակցելով գործկոմի նիստերին՝ հաճախ էի լսում մեր համայնքի բազմաթիվ խնդիրների մասին: Ինձ դա մեծ ցավ էր պատճառում: Հենց այդ ժամանակ որոշեցի առաջադրվել, որպեսզի իմ համայնքը լինի լավագույններից մեկը: Ընտրվեցի, սակայն մեծ դժվարությամբ»:

Խնստովակում է, որ առաջին անգամ իրեն ընտրեցին ոչ թե որպես Ալինայի, այլ ծնողների շնորհիվ, որովհետև նրանք հարգված և ճանաչված մարդիկ էին: «Գյուղացիներն ասում էին, որ Գարիկն ու Ջուլիետայի աղջիկը չի կարող վատ մարդ լինել: Բնականաբար, երբ ընտրվեցի, ամեն ինչ ուզում էի անել, որ իմ ծնողների վաստակած լավ անվան վրա որևէ բիծ չթողնեմ»,- ասում է նա՝ ընդգծելով, որ երկրորդ անգամ «նրանք ինձ ընտրեցին՝ Ալինային» և դա ամենամեծ գնահատականն է, որ տալիս է ժողովուրդը:

Նրա ղեկավարման ընթացքում գյուղում հսկայական գործ է կատարվել: «Երբ գյուղապետ ընտրվեցի, մանկապարտեզը հիմնովին ավերված էր: Բայց ես 7 երեխայով մանկապարտեզ եմ աշխատեցրել և ժամանակի ըն-

թացքում թիվը հասցրել առավելագույնի: Կարողացել եմ մարդկանց հոգեբանության մեջ մտցնել, որ երեխան պետք է նախադպրոցական կրթություն ստանա: Մշակույթի տունն ավերակ վիճակում էր, դիմեցինք քաղաքաշինության նախարարություն և կարողացանք այդ փլատակից գեղեցիկ կենտրոն ստեղծել երիտասարդների համար: Առողջության առաջնային պահպանման կենտրոնն ենք վերանորոգել: Համայնք ամբողջությամբ զազիֆիկացված է: Կատարել ենք ասֆալտապատման աշխատանքներ, ընթացիկ նորոգումներն անընդհատ շարունակվում են...»

Սակայն, եթե հարցնեք, թե գլխավոր ձեռքբերումը ո՞րն է, կասե՛մ՝ կարողացել եմ մարդկանց մտածելակերպը փոխել: Գյուղացին հավանաբար իմ խոսքին, որովհետև ես թափանցիկ աշխատեցի, նա տեսավ, որ իր վճարած հարկով իր խնդիրները լուծվում են: Ես մտքորոշեցի այն մշակույթը, որ թո համայնքի տերը դու ես, պետք է վճարես և պահանջես: Այսօր գյուղում հարկերի 85 տոկոսը իջվաքազրվել է: Մի անգամ գործընկերներիցս մեկը եկել էր գյուղ: Գրասենյակի պատուհանից մարդկանց բազմություն տեսնելով՝ հարցրեց. «Ալինա՛, ես ի՞նչ ժողովուրդ եմ»: Ասում եմ՝ բնակիչներն են, եկել են հարկերը վճարելու: Զարմացավ: Նոր երզնկայում փոխադարձ վստահություն կա, և դա ամենակարևորն է...»:

Ասում է՝ վերջին ընտրությանը 230 մարդ իրեն ձայն չի տվել: «Ես ուզում եմ հասկանալ նրանց դժգոհությունը, ի՞նչն է սխալ արել:



Ինչո՞ւ են նրանք դեմ քվեարկել: Ուզում են հասկանալ, որ արմատը գտնեն և այդ ուղղությամբ աշխատեն: Ցանկացած իրավիճակում միշտ փորձում եմ մեղքի իմ բաժինը գտնել...»

Արուսյակ Գուհարյան. «Ապացուցեցի, որ կինն էլ կարող է լավ ղեկավար լինել»



Մասնագիտությամբ իրավաբան Արուսյակ Գուհարյանը Շիրակի մարզի Արեգունի գյուղապետի պաշտոնին հասել է քայլ առ քայլ: Նախ՝ ավագանու անդամ է եղել, հետո՝ աշխատել գյուղապետարանում որպես աշխատակազմի քարտուղար, իսկ 2005-ի հոկտեմբերին ընտրվել է համայնքի ղեկավար:

Ասում է՝ աշխատելով գյուղապետարանում, տեղյակ էր գյուղի խնդիրներին, և հենց գյուղի ամենափոքար վիճակն իրեն ստիպեց մտորել համայնքի ղեկավարի պաշտոնում առաջադրվելու մասին, որոշում կայացնելու էլ նպատակն ամուսինը:

«Ամուսինս ոչ միայն դրոշմ, որ ընտրվեմ, այլև օգնում էր: Հիմա նա արտագնա աշխատանքի է մեկնել, բայց այնտեղից էլ է խորհուրդներ տալիս, հուսադրող խոսքեր ասում»,- պատմում է տիկին Գուհարյանը՝ հավելելով, որ եթե հարազատների աջակցությունը չլիներ՝ դժվար կլիներ հաստատվել ու կայանալ որպես համայնքի ղեկավար:

Արեգունի գյուղում միշտ էլ ընտրություններն անցել են լարված և բարձր մրցակցությամբ: Արուսյակ Գուհարյանն էլ միշտ լուրջ մրցակիցներ է ունեցել, սակայն համագյուղացիները նրան են վստահել: «Գուցե մտածեցին, որ կինն ավելի պատասխանատու է, ավելի խոստումնալից է, և, կարծում եմ՝ նրանց հուսալիք չեմ արել: Այս տարի էլ հերթական անգամ համոզվեցի, որ գյուղացին ինձ հարգում և գնահատում է: Սեպտեմբերի 8-ին իմ ծնունդն էր, հաջորդ օրը ՏԻՄ ընտրություններն էին, և երբ պարզ դարձավ, որ ես եմ ընտրվել, կատակով ասում էի, որ ժողովուրդն ինձ նվեր մատուցեց իր վստահությամբ: Ընտ-

րության օրը համոզվեցի, որ վայելում եմ հասարակության հարգանքը»:

Հագրյանին քայքայված գյուղ էր բաժին ընկել. երկրաշարժից առաջ գյուղն աղբեղանաբնակ էր: Միայն 1989-ին է վերաբնակեցվել հայերով: Կարչական որևէ չենք գոյություն չունեցող, չկար գյուղապետարանի շենքը, դպրոց ու մանկապարտեզ: «Տնակային պայմաններում ենք աշխատում: Արդեն 8-րդ տարին է՝ պայքարում եմ, համառում եմ, պահանջում ու խնդում, որ ուղղապետարանի դարձնեն համայնքին: Թեև ամենակարևոր խնդիրը չի լուծվել, սակայն սկիզբն է դրվել: Դպրոցի հիմքը զգվել է: Սա շատ մեծ ձեռքբերում է: Ես իմ աշխատանքը թերի եմ գնահատում և գոհ կլինեմ միայն այն ժամանակ, երբ դպրոցի ու մանկապարտեզի հարցը լուծվի»,- ասում է նա:

Չնայած ինքնաբերական անհատական վերաբերմունքին՝ Արուսյակ Գուհարյանը գյուղում հսկայական գործ է կատարել: «Շատ դժվար էր միջազգային կազմակերպությունների հայացքն ուղղել դեպի գյուղ, բայց հասանք այն բանին, որ ջրագիծ ենք կառուցել և գյուղացուն ազատել շատ կարևոր մի հոգսից, դպրոցի շինարարությունը նույնպես միջազգային կազմակերպության օժանդակությամբ է արվում»:

Արդեն կայացած համայնքի ղեկավարն այսօր խոստովանում է, որ իր կյանքում դժվա-

րությունների հաճախ է հանդիպել: «Առաջին լուրջ խնդիրը մարդկանց մտածելակերպն էր: Շատ դժվար էր Հայաստանի հեռավոր գյուղերից մեկում, այն էլ Շիրակում՝ ավանդապաշտ ժողովրդի մեջ, կոտրել կարծրատիպը, որ կինը կարող է համայնքի ղեկավար դառնալ: Եղել են պահեր, որ զիջեր գուրկա դրել են բարձրն ու արտասվել: Բայց իմ մեջ ուժ եմ գտել, որպեսզի նախ բարձր պահեմ ընտանիքիս անունն ու պապուցեմ, որ կինն էլ վատ ղեկավար չէ, շատ պարզաբան ավելի լավն է, քան տղամարդ ղեկավարը»,- հիշում է Հագրյանը:

Նրա կարծիքով՝ կանայք պետք է անայնպես լինեն քաղաքական ուղղորտում և կառավարման համակարգում. «Թեկուզ միայն այն բանի համար, որ տղամարդիկ լավ գործ են անում, մինչդեռ կանայք խորն են մտածում: Կանայք միանգամից որոշում չեն կայացնում, մի քանի անգամ զգում-բռնում են, նոր որոշում են կայացնում, և այն լինում է ճիշտ ու վճռական»: Քաղաքականություն մուտք գործող կանանց էլ խորհուրդ է տալիս՝ սել իրենց ներքին ձայնին, իրենց մեջ ուժ գտնել ու պայքարել: «Ոչինչ, եթե առաջին անգամ չստացվի, երկրորդ անգամ անեն ինչ լավ կլինի»:

Հարցազրույցները վարեց Գամիկ Գարությունյանը

Կանայք ավագանիներում

Ռուզաննա Տոռոզյան. «Մի՛ վախեցեք սխալվելուց կամ պարսկվելուց»



Գորիսի «Կանանց զարգացման ռեսուրս կենտրոն» հիմնադրամի տնօրեն Ռուզաննա Տոռոզյանը միակ կինն է Գորիսի ավագանու կազմում: ՏԻՄ համակարգում նորեկն է, 2002-ին եղել է Գորիսի ավագանու առաջին կին անդամը, այնպես որ, լավ գիտի սպասվող աշխատանքը: 2009-ին իր նախածնունդային և ԵԱԿԿ աջակցությամբ ստեղծեց «Կանանց զարգացման ռեսուրս կենտրոնը», ինչը հնարավորություն տվեց իմ շուրջը հավաքե-

լու խելացի, բանիմաց կանանց, ովքեր պատաստ էին իրենց ուժերը ներդնելու և աջակցելու համայնքի զարգացմանը: Իր քիմի հետ իրականացրել է բազմաթիվ նախածնունդային ներդրումներ, որոնք նպատակաուղղված են եղել քաղաքի խնդիրների լուծմանը:

Ասում է՝ խնդիրն այն է, որ կանայք պիտի որոշակի թվով ներկայացված լինեն որոշումների կայացման մակարդակում, այլ այն, որ ցանկացած օղակ կատարյալ է գործում, եթե առկա են կնոջ և տղամարդու ներկայությունն ու համագործակցությունը:

«Երբ կինը և տղամարդը կանգնած են ինչ-որ խնդրի առջև, նրանք հարցի լուծմանը տարբեր կերպ են մոտենում. տղամարդը իր տեսանկյունից, կինը, լինելով ընտանիքի մայր, բոլորովին այլ տեսակետ ունի: Այստեղ է, որ դիտարկելով խնդիրը տարբեր տեսանկյուններից՝ հարցին հավասարակշիռ մոտեցում է ցուցաբերվում: Ուստի խոսքը սեռերի միջև պայքարի մասին չէ, այլ՝ զաղափարների և մոտեցումների համադրման»:

Մասնագիտությամբ մանկավարժ Ռուզաննան քաղաքականությամբ հետաքրքրվեց 2000-ականից, երբ աշխատում էր Գորիսի քաղաքապետարանում:

«Յենց այդ ժամանակ հասկացա, թե որքան

խնդիրներ կան մեր քաղաքում, սակայն ամենալուրջը հասարակության անտարբերությունն էր: Երևի չէին վստահում կամ էլ հույս չունեին՝ չգիտեմ, բայց այդ անտարբերությունն ինձ շատ զարմացրեց, և ես որոշեցի մասնակից դառնալ համայնքի կառավարման գործընթացին և փոխել հասարակության վերաբերմունքը ավագանու ինստիտուտի հանդեպ»,- ասում է Ռուզաննան՝ հավելելով, որ 2002-ին առաջադրվեց ավագանու անդամ և ընտրվեց:

Ավագանու գործունեության հանդեպ վերաբերմունքն այնքան լուրջ էր, որ ընտրվելուց հետո թողնելով քաղաքապետարանում իր աշխատանքը՝ հասարակական ու քաղաքական ակտիվ գործունեություն ծավալեց: Սակայն ձեռք բերած հաղթանակից հետո ճաշակեց մասնաշաղկապի դառնությունը. 2005-ին երկրորդ անգամ առաջադրվեց, սակայն չընտրվեց: Ասում է՝ «Չընտրվելու միակ մեղավորը ես էի»:

«Այդ ժամանակ շատ ավելի ինքնավստահ էի: Առաջին անգամ առաջադրվեցի, քաղաքաշաղկապի կազմակերպել, թաղային, անհատական հանդիպումներ ունեցա, մարդկանց ներկայացա, պատմեցի՝ ի՞նչ ծրագրեր ունեմ, ի՞նչ են ուզում անել, երկրորդ անգամ մասնաշաղկապումներ չկազմակերպեցի: Մտածեցի՝ արդեն ճանաչում են: Իմ կատարած աշխատանքների վերաբերյալ չէի իրազեկել մարդկանց, և

նրանց մեծ մասը չգիտեր, որ իրենց հուզող այս կամ այն հարցը լուծվել էր իմ շնորհիվ»:


Նախորդ ընտրություններից դասեր քաղելով՝ այս անգամ նա քաղաքաշաղկապի շատ լուրջ էր մոտեցել. ոչ միայն թաղային հանդիպումներ էր կազմակերպել, այլև բուկլետներ հրատարակել ու իր գործունեության վերաբերյալ քաղաքական տեսանկյունով նկարահանել:

Ընտրություններում նրա հաղթանակը նպատակին հասնելու միայն առաջին քայլն է: Իր խոսքով, առջևում երկարամյա ծանր աշխատանք է սպասում, որից օգուտ պետք է քաղեն բոլոր գործընկերները:

Իսկ թե ի՞նչ խորհուրդ կտար այն կանանց, ովքեր ունեն ավագանու անդամ դառնալու պոտենցիալ, սակայն չեն համարձակվում կամ չեն կարողանում արգելքներ հաղթահարել, Ռուզաննան ասում է.

«Խորհուրդ կտամ համագործակցել ներկա ավագանիների հետ, մասնակցել նիստերին, քննարկումներին: Այսօր հասարակական սեկտորը շատ ակտիվ է, գոնե հասարակական գործունեություն ծավալեն, և այդպես ձեռք բերեն փորձ ու ակտիվություն: Այդ ամենն արդյունք կտա: Տանը նստելով՝ ինքնագնահատականդ չի բարձրանա: Մի՛ վախեցեք սխալվելուց կամ պարսկվելուց: Պետք է փորձել փոքր քայլերով առաջ գնալ»:

Կես մետրանոց քվեաթերթիկից միայն մի կին անցավ



Գյումրու ավագանու անմախաղեպ երկար՝ 72 հոգուց բաղկացած թեկնածուների ցուցակում յոթ կին կար, անցավ միայն մեկը՝ թիվ 19 դպրոցի տնօրեն Նարինե Մետրոյանը (հարցազրույցը նրա հետ հաջորդ համարում): Ընտրապայքարի դուրս եկավ 334-ի աջակցությամբ և կարգախոսի նմանվող պնդմամբ՝ «Քաղաքապետը պետք է իրականացնի ավագանու որոշումները, ոչ թե իր սեփական որոշումները»: Խոսքը կին քաղաքապետի մասին էր: Այժմ, լինելով 21 հոգուց բաղկացած ավագանու միակ կին անդամը, կիրոնի իրագործել խոստացածը արդեն մեր քաղաքապետի ղեկավարությամբ: Բացի այդ, նա առաջին կինն է, ով դարձել է Գյումրու ավագանու անդամ, մինչ այժմ կանանց չէր հաջողվել նվաճել այդ անդամը, թեպետ նրանք փորձել են առաջադրվել: Նախորդ ընտրություններում ընդամենը երկու կին թեկնածու կար, այս անգամ առաջադրված յոթը յուրօրինակ շեղորդ էր: Չնայած այս տարի պայքարն առավել քան թեժ էր՝ մեկ տեղի համար երեք թեկնածու:

Գայանե Բիչախյան. «Ես ինքս էլ որպես գյումրեցի ուրիշ տեսակի ավագանի եմ ուզում տեսնել»

Գյումրիում առաջադրված կանանցից երեքը դպրոցի տնօրեններ էին: Թիվ 29 դպրոցի տնօրեն Գայանե Բիչախյանի ավագանու անդամության թեկնածու նույնպես Հայաստանի հանրապետական կուսակցությունն էր առաջադրել:

Ասում էր՝ կփորձեմ իմ օրինակով էլ ապացուցել, որ արհեստավարժ կանայք կարող են շատ բան անել քաղաքի համար:

«Ես ինքս էլ որպես գյումրեցի ուրիշ տեսակի ավագանի եմ ուզում տեսնել և ոչ միայն որպես ընտրվող, այլև ընտրող մեծ ցանկություն ունեմ, որ ավագանիում մտավորականությունն ու կանայք ևս ներկայացված լինեն: Իրականում թյուր կարծիք է ձևավորվել, թե մեր քաղաքը ավանդական է, և կինը, ինչ-ինչ կեղծ կարծրատի-

պերից ելնելով, չի կարող քաղաքական գործիչ լինել, սակայն իրականությունն այն է, որ հակառակը՝ Գյումրին կին ղեկավարների մեծ փորձ ունի: Դեռ Խորհրդային Միության տարիներին էլ Գյումրու քաղաքի քարտուղարը կին է եղել, և գյումրեցիներն իրականում շատ լավ հիշողություններ ունեն կին ղեկավարների հետ կապված: Գիտե՞ք ինչն էլ ունենք կանայք, որ և քաղաքականության մեջ են, և պաշտոններ են զբաղեցնում, որոնց շատ լավ ընդունում ու ողջունում են»:

Ի դեպ, Բիչախյանը, ով անցողիկ չեմին շատ մոտ ծայրեր էր ստացել, այբարեց մինչև վերջ՝ փորձեց բողոքարկել արդյունքները իր ընտրատարածքում, սակայն բացահայտված խախտումները արդյունքների պատկերը գրեթե չփոխեցին:



Կարինե Մկրտչյան. «Ավագանին Գյումրիում միշտ դիպարկվել է իբրև տղամարդկանց փակ ակումբ...»



Գյումրու ավագանու մեկ այլ թեկնածու՝ 33-ամյա Կարինե Մկրտչյանը ներկայացնում էր «Քաղաքը մերն է» քաղաքացիական նախաձեռնությունը: Անգլերենի մասնագետ է, շուրջ հինգ տարի աշխատել է «Շանթ» հեռուստաընկերությունում, այնուհետև ուսումը շարունակել է Լոնդոնում՝ ուսումնասիրել լրագրության մրբությունները և արդեն հայրենիքում շուրջ 10 տարի հայտնի ընկերություններից մեկում աշխատել որպես հանրային կապերի պատասխանատու: Այսօր արդեն Կ.Մկրտչյանը հանդես է գալիս որպես անհատ ձեռնբեր՝ Գյումրիում ունի հազուստի մոդելավորման փրահ: Նաև համագործակցել է միջազգային մի

ջաղ կազմակերպությունների, այդ թվում՝ բրիտանական մի հիմնադրամի հետ, որն աջակցում է կանանց ձեռնբերության զարգացմանը՝ տրամադրելով դրամաշնորհներ փոքր բիզնես ունեցող կանանց, որպեսզի աշխատատեղեր ստեղծվեն: Երեք տարվա ընթացքում ծրագրի շրջանակներում ստեղծվել է շուրջ 30 աշխատատեղ: Ունի երկու երեխա:

Ընտրությունների ավարտից հետո ասաց, որ իրեն նվաստացած է զգում, ինչպես և իրենց նախածնունդային բոլոր անդամները, որոնք միասին ընդամենը 3300 ձայն էին ստացել: Ասում է՝ չէր պատկերացնում, որ այդքան ցածր վարկանիշ կունենա: Նրա կարծիքով՝ մարդկանց տնտեսական կախվածությունը թույլ չի տալիս, որ կարողանան ինքնուրույն որոշումներ կայացնել: «Քաղաքի մի քաղում անասուն են մորթել և մեկական կգ-ի չափով բաժանել յուրաքանչյուր ընտրողի, մյուսում լիցքավորել են հե-

ռախտները, 1000-ական դրամ բաժանել: Բայց մեկ է, չենք հանձնվելու, պետք է հասկանանք՝ ինչպես այս ամենի դեմ պետք է առնել»:

Մի համազանց էլ կար, որ խանգարեց Կարինեին, ով հասարակության պատկերացումներով պաշտոնին հավակնելու համար դեռ շատ երիտասարդ է, առավել ևս՝ կին է:

«Խնդիրն այն է, որ ավագանին կոնկրետ Գյումրիում միշտ դիտարկվել է իբրև «թաղային հեղինակություններով» համալրված, ինչ-որ տղամարդկանց փակ ակումբ, ուր ներխուժելը շատ մեծ համարձակության, հանդգնության պես մի բան է, ինչը Գյումրիում այդքան էլ լավ չի ընկալվում: Առավել ևս, ուժեղ է «կինը պետք է իր տեղն իմանա» սկզբունքը իր կանոններով՝ խոհանոց, երեխա, դաս պատրաստել, ինչու չէ՞ սերիալ նայել: Բայց, անշուշտ, այդ ամենը կարելի է համատեղել և գուցե սերիալ չնայել...» - ասում է նա՝ ավելացնելով, որ «Գյումրիի ընտանիքներում կանանց խոսքի

իրավունք տրվում է միայն 40-ից հետո»:

Ինչ վերաբերում է իր սեփական առաջադրմանը, ապա այն միանշանակ արժանազանի չարժանացավ: «Առաջադրումն շատ բնական համարեցին գործընկերներս, որոնք ավելի շատ էին ծանոթ իմ ակտիվությանը, քան հարազատներս: Ավելի՛ն՝ հարազատներիցս մեկը իմ հարցազրույցից հետո ասաց, որ ներդրություն է խնդրում, քանի որ չգիտեր, որ ես նման ներուժ ունեմ... Թե չէ ասում էին ի՞նչ գործ ունես, վերջապես երեխաներ ունես՝ նրանց խնամքը կտուժի և այլն»:

Նրա կարծիքով, հիմնական գեղերային խնդիրը ընտանիքում է, և երբ այդ իրավիճակը կինը կարողանում է հաղթահարել իր ընտանիքում, ստանում է հավասար ընտրության և դրսևորվելու իրավունք, ապա հասարակության մեջ խնդիրների գրեթե չի բախվում:

Պարզագրույցները վարեց Էնգելա Մակարյանը

Շնորհակալական խոսք

«Կինը և քաղաքականությունը» թերթը և WomenNet.am կայքը շնորհակալություն են հայտնում Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիային և Գորիսի կանանց զարգացման «Ռեսուրս կենտրոն» հիմնադրամին՝ ՏԻՄ ընտրություններում կանանց մասնակցության լուսաբանման հարցում ցուցաբերած աջակցության համար:

Թողարկումը հրատարակվել է ԵԱԿԿ երեւանյան գրասենյակի և Վրաստանում Երեւանի թագավորության դեսպանատան համատեղ աջակցությամբ  
Խմբագիր՝ Թամարա Գովաթյանյան  
Էլ. հասցե՝ promediagender\_arm@yahoo.com